ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2021/41

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունվարի 2021 թ. N 41

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ Ավանդական բժշկության համալսարան

Գործունեության հասցեն՝ ՀՀ. ք. Երևան, Մարշալ Բաբաջանյան 38 Ա

Նախորդ հավատարմագրման մասին

որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021թ. հունվարի 15-ին Հանձնաժողովի նիստում քննարկեց «Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ-ի (այսուհետ՝ ԱԲՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ավանդական բժշկության համալսարանի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	27 դեկտեմբերի 2018
բուհի ինքնավերլուծության ներկայացում	8 մայիսի 2019
փորձագիտական այցի իրականացում	16–19 սեպտեմբերի 2019
փորձագիտական զեկույցի ներկայացում	27 դեկտեմբերի 2019
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	20 հունվարի 2020

Ավանդական բժշկության համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար:
Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել բուհի դիրքավորումը կրթական շուկայում և առաքելությունը, այն է. «ԱԲՀ-ն բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության առաջատար կրթօջախ է, որի գործունեությունը նպատակաուղղված է բժշկական կրթության ազգային և տարածաշրջանային եզակի և նախադեպը չունեցող, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող բժիշկների պատրաստմանը»:
2015-ից ԱԲՀ-ն փոփոխել է սպասարկվող կրթական և աշխատանքային շուկաները՝ թիրախավորելով միջազգային ուսանողների հավաքագրումը և այժմ ՄՈՒՀ-ում սովորող ուսանողների գերակշիռ մեծամասնությունը (80%) միջազգային ուսանողներ են:

ԱԲՀ-ն գտնվում է անցումային ժամանակաշրջանում:

1. Համալսարանը շարունակաբար բարելավում է ենթակառուցվածքները, նյութատեխնիկական հագեցվածությունը՝ կատարելագործելով ուսուցման և ուսումնառության միջավայրը: Որակի ապահովման տեսանկյունից առավել ռիսկային է Կրթական ծրագրերի մշակման, ներդրման, մշտադիտարկման և վերանայման գործընթացը, որն առավել համակարգված տեսք է ստացել վերջին տարիների ընթացքում: Չնայած վերանայվել են ՄԿԾ-ները, իրականացվել է բենչմարքինգ, կրթական ծրագրերն ուղարկվել են արտաքին փորձաքննության, վերանայվել է գնահատման համակարգը: Այնուամենայնիվ բացակայում են վերջնարդյունքահեն մոտեցումները և վերջնարդյունք-մեթոդ-գնահատում տրամաբանական կապը ինչպես ընդհանուր ՄԿԾ-ում, այնպես էլ առարկայական ծրագրերում: ՄԿԾ-ներում սակավաթիվ են հետազոտական հմտություններ ձևավորող դասընթացները, հստակ չէ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի սերտ կապը: Ունենալով արտասահմանյան ուսանողների գերակշռող համամասնություն (80%), բուհը չի իրականացրել

թիրախային միջազգային շահակիցների կարիքների վերլուծություն, վերանայման գործընթացում ներգրավված չեն եղել միջազգային աշխատաշուկայի ներկայացուցիչներ, ինչպես նաև չի ուսումնասիրվել եվրոպական և այլ երկրների փորձը: Հաշվի առնելով ԱԲՀ-ի առանձնահատկությունները և հավակնությունները՝ մշակված կրթական ծրագրերը պետք է երաշխավորեն նաև միջազգային կարիերայի հնարավորություններ:

ԱԲՀ-ում գործող պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման գործընթացը հնարավորություն է ստեղծում ներգրավելու ոլորտի պրակտիկ փորձ ունեցող և անգլերենին տիրապետող դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի, որոնցից գոհ են ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային ուսանողները: Դրական է նաև, որ ԱԲՀ-ն ուսումնական գործընթացում ներգրավում է իր շրջանավարտներին

Ուսանողները կարողանում են ավելի բարձր կրթական աստիճան ստանալու համար ուսումը հաջողությամբ շարունակել այլ բուհերում:

Որակավորումների արժանահավատ շնորվման տեսանկյունից համալսարանում առկա են առաջխաղացման միտումներ և օրինակներ, սակայն դեռևս խնդիրներ և ռիսկեր կան:

2. ՄՈՒՀ-ում իրականացվում է իրավիճակային կառավարում, որոշումները հիմնականում կայացվում են Հիմնադիրների Խորհրդի կողմից, ՄՈՒՀ-ի կառավարման տարբեր խորհուրդներում ներգրավված չեն արտաքին շահակիցներ, ՄՈՒՀ-ի մարդկային և ֆինանսական ռեսուրսների պլանավորումը մի շարք ոլորտներում /գիտություն/ չի համապատասխանում ՌԾ-ով սահմանված նպատակներին, չի կատարվում ռիսկերի գնահատում, կառավարման համակարգի արդյունավետության գնահատում չի իրականացվել, արտաքին միջավայրի համակարգային վերլուծություն առկա չէ, կառավարման ոլորտում ՊԻԳԲ շրջափուլը գրեթե բոլոր ոլորտներում գտնվում է պլանավորման և իրականացման փուլերում: Որակի ներքին ապահովման համակրգը դեռ ներդրման փուլում է, փաստաթղթային հենքը մշակված է 2017-2018 թվականներին և դեռևս գնահատված չէ դրանց արդյունավետությունը: Ընդհանուր առմամբ կարելի է եզրահանգել, որ ***Առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը, սակայն արդյունքահեն կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են:***

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունն առայժմ բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը: Միջազգայնացումը բուհում սահմանափակվում է միջազգային ուսանողների ներգրավվածությամբ և անգլերենով դասավանդմամբ, ապահովված չէ կրթության բովանդակության և մեթոդների, կառավարման, ինչպես նաև հետազոտությունների միջազգայնացումը, ինչը կնպաստի բուհի կայուն զարգացմանը և որակի շարունակական բարելավմանը, կապահովի շրջանավարտների միջազգային մրցունակությունը և կրթական ծրագրերի արժանահավատությունը նաև ՀՀ սահմաններից դուրս: Առկա է հետազոտական գործունեության պլանավորման և խրախուսման մեխանիզմների բաց. բուհն ունի որոշակի հետազոտական ռեսուրս /դասախոսական կազմ, ԳԲՈՒԿ/, ինչը, սակայն քաղաքականության բացակայության պատճառով արդյունավետ կերպով չի օգտագործվում: Դասախոսական կազմն ու ուսանողները քիչ են ներգրավված հետազոտական աշխատանքներում: Հետազոտությունները սահմանափակվում են անհատ դասախոսների նախաձեռնություններով: Անհրաժեշտ է իրականացնել առավել նպատակային պլանավորում՝

հետազոտության և զարգացման համար տրամադրելով նաև ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսներ:

Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորումների արժանահավատ շնորհմանը.

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ԱԲՀ-ի կողմից ներկայացված ծրագրի մեծ մասի իրականացումը ռիսկեր չի պարունակում: Ծրագրով սահմանված արդյունքների ձեռքբերումը կարող է նպաստել համալսարանի գործունեության տարբեր ոլորտներում առկա խնդիրների լուծմանը՝ երաշխավորելով հաստատության կայուն առաջընթացը:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.

   ա) **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կթրական ծրագրեր» «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

   բ) ԱԲՀ-ի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի քանակական և որակական ցուցիչներ ունենալու պահանջը,

   գ) ԱԲՀ-ի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների, պատասխանատուների և նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը:

   գ) Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու համալսարանի հավակնությունների տեսակետից՝ միջազգային փորձագետի գործընկերային գնահատման արդյունքները:
3. Հատուկ ուշադրություն դարձնել.

   ա) ՄԿԾ-ներում պրակտիկ բաղադրիչի ուժեղացմանը՝ գնահատման ժամանակ շեշտադրելով հետազոտական և պրակտիկ գմտությունների ձեռքբերմանը,

   բ) Բժշկական հաստատությունների հետ կայուն գործընկերային հարաբերությունների ստեղծմանը,

   գ) Միջազգային աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրությանը՝ միջազգային բժշկական ստանդարտներին համապատասխանության ապահովմանն առումով,

   պրոֆեսորադասախոսական կազմի կայունության ապահովմանը,

դ) ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,

ե) ՊԴ կազմի վերպատրաստմանը և մասնագիտական հմտությունների կատարելագործմանը,

զ) գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների մասնակցությանը :

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Ավանդական բժշկության համալսարանի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2021 թ., հունվարի 15

ք.Երևան